«ՌԳՍ-ԱՐՄԵՆԻԱ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

СТРАХОВОЕ ЗАКРЫТОЕ АКЦИОНЕРНОЕ ОБЩЕСТВО «РГС-АРМЕНИЯ»

# ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ
# ПРАВИЛА СТРАХОВАНИЯ ЗДОРОВЬЯ

Փաստաթղթի կոդ / Код документа

TC750-03-01

Խմբագրություն / Редакция

07

## ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

**ՀԱՍՏԱՏՎԱԾ Է**
«ՌԳՍ-ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ Խորհրդի կողմից
(15.08.2022թ. Խորհրդի նիստի թիվ 05 արձանագրություն)

Խորհրդի նախագահ՝ Դ.Է. Խաչատուրով

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

1. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԸ
2. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԸ
3. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐԸ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ
4. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ԿԱՐԳԸ
5. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ/ՎԿԱՅԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ
6. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍԱԿԱԳՆԻ ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐԻ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ԿԱՐԳԸ
7. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ/ՎԿԱՅԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ, ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ
8. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
9. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ
10. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԵՐԺՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ
11. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ
12. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ
13. ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՏԵՐՄԻՆՆԵՐԸ

Սույն ապահովագրության պայմանները (այսուհետ՝ Պայմաններ) մշակված են համաձայն Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) Քաղաքացիական օրենսգրքի, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի և համապատասխանում են ՀՀ ԿԲ կողմից շնորհված թիվ ԱՊՌ 0009 Լիցենզիայի Առողջության ապահովագրություն դասին:
Սույն Պայմանները հանդիսանում են վերջիններիս համաձայն կնքված ապահովագրության պայմանագրերի անբաժանելի մասը:
Սույն Պայմանների դրույթները կարող են փոփոխվել (բացառվել և/կամ լրացվել) ապահովագրության պայմանագիր կնքելու պահին կամ դրա գործողության ժամկետի ընթացքում, ինչի մասին նշվում է ապահովագրության պայմանագրում: Նման փոփոխությունները չեն կարող հակասել ՀՀ օրենսդրությանը:
Սույն Պայմանների հիման վրա կարող են մշակվել ապահովագրական ծրագրեր/պրոդուկտներ (այսուհետ՝ «Ծրագիր»):
Սույն Պայմանների համաձայն ապահովագրությունը գործում է միայն ՀՀ տարածքում, եթե այլ բան նախատեսված չէ ապահովագրության պայմանագրով:

### 1. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԸ

1.1. Համաձայն սույն Պայմանների և ՀՀ գործող օրենսդրության՝ «ՌՈՍԳՈՍՍՏՐԱԽ-ԱՐՄԵՆԻԱ» Ապահովագրական ՓԲԸ (այսուհետ՝ Ապահովագրող) կնքում է բժշկական ապահովագրության պայմանագրեր (այսուհետ՝ Պայմանագիր/Վկայագիր) իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ (այսուհետ՝ Ապահովադիր)՝ տրամադրելով վերջիններիս կամ իրավաբանական անձանց աշխատողների (Պայմանագրով/Վկայագրով նախատեսված դեպքերում նաև ընտանիքի անդամներին) առողջության հետ կապված բժշկական և/կամ այլ ծառայությունների գծով հատուցում՝ համաձայն սույն Պայմաններից բխող Ապահովագրողի կողմից առաջարկվող ապահովագրության ծրագրերի (այսուհետ՝ Ծրագիր):
1.2. Ապահովագրության սուբյեկտներն են՝ Ապահովագրողը, Ապահովադիրը, Ապահովագրված անձը:
1.3. Ապահովադիրը կնքում է Ապահովագրողի հետ Պայմանագիր իր օգտին կամ երրորդ անձանց օգտին (այսուհետ՝ Ապահովագրված անձինք): Ապահովադիրներ կարող են հանդիսանալ՝

- ռեզիդենտ կամ ոչ ռեզիդենտ իրավաբանական անձինք, ՀՀ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինները, որոնք գրանցված են և գործում են ՀՀ օրենսդրության համաձայն,
- գործունակ ֆիզիկական անձինք՝ ՀՀ քաղաքացիներ,

## ПРАВИЛА СТРАХОВАНИЯ ЗДОРОВЬЯ

**УТВЕРЖДЕНО**
Советом СЗАО "Росгосстрах-Армения"
(протокол N 05 заседания совета от 15.08.2022г.)

Председатель совета Д.Э. Хачатуров

**СОДЕРЖАНИЕ**

1. СУБЪЕКТЫ СТРАХОВАНИЯ
2. ОБЪЕКТЫ СТРАХОВАНИЯ
3. СТРАХОВЫЕ СЛУЧАИ И СТРАХОВЫЕ РИСКИ
4. ПОРЯДОК ОПРЕДЕЛЕНИЯ СТРАХОВОЙ СУММЫ
5. ПЕРИОД ДЕЙСТВИЯ ДОГОВОРА/ПОЛИСА СТРАХОВАНИЯ
6. ПОРЯДОК ОПРЕДЕЛЕНИЯ СТРАХОВОГО ТАРИФА, СТРАХОВОЙ ПРЕМИИ, ОЧЕРЕДНОГО СТРАХОВОГО ВЗНОСА
7. ПОРЯДОК ЗАКЛЮЧЕНИЯ, ПРЕКРАЩЕНИЯ ДОГОВОРА/ПОЛИСА СТРАХОВАНИЯ И ВНЕСЕНИЯ В НЕГО ИЗМЕНЕНИЙ
8. ПРАВА И ОБЯЗАННОСТИ СТОРОН
9. ПОРЯДОК И УСЛОВИЯ ОСУЩЕСТВЛЕНИЯ СТРАХОВОГО ВОЗМЕЩЕНИЯ
10. ОСНОВАНИЯ ОТКАЗА В ВЫПЛАТЕ ВОЗМЕЩЕНИЯ
11. ОТВЕТСТВЕННОСТЬ СТОРОН
12. ПОРЯДОК РАЗРЕШЕНИЯ СПОРОВ
13. ТЕРМИНЫ, ИСПОЛЬЗУЕМЫЕ В ПРАВИЛАХ

Настоящие Правила (далее - Правила) составлены в соответствии с Гражданским кодексом РА, "Законом о страховании и страховой деятельности" РА и соответствуют классу Страхования здоровья Лицензии No. 0009, выданной ЦБ РА.
Настоящие Правила являются неотъемлемой частью Договора страхования, заключенного в соответствии с данными Правилам.
Положения настоящих Правил могут быть изменены (исключены и/или дополнены) в момент заключения договора страхования или в течение его действия, о чем указывается в договоре страхования. Подобные изменения не могут противоречить законодательству РА.
На основании настоящих Правил могут быть разработаны страховые программы/продукты (далее - «Программа»):
В соответствии с настоящими Правилами страхование действует только на территории Республики Армения, если иное не предусмотрено договором страхования.

### 1. СУБЪЕКТЫ СТРАХОВАНИЯ

**1.1.** В соответствии с настоящими Правилами и с действующем законодательством РА, ЗАО «РОСГОССТРАХ-АРМЕНИЯ» (далее - Страховщик) заключают Договоры медицинского страхования (далее – Договор/Полис страхования) с юридическими и физическими лицами (далее - Страхователь), предоставляя им или сотрудникам юридических лиц (также членам их семей, при предусмотрении Договором/Полисом) возмещение за медицинкие и/или иные услуги, связанные со здоровьем, согласно предлагаемым Страховщиком программам Страхования (далее - Программа) на основании настоящих Правил.

**1.2.** Субъектами страхования являются Страховщик, Страхователь, Застрахованное лицо.
**1.3.** Страхователь заключает Договор страхования со Страховщиком в свою пользу или в пользу третьих лиц (далее – Застрахованные лица). Страхователями могут являться:

- юридические лица - резиденты или не резиденты, органы государственного или местного самоуправления РА, которые зарегистрированны и действуют в соответствии с законодательством РА;

օտարերկրյա քաղաքացիներ:

**1.4.** Սույն Պայմանների համաձայն՝ Պայմանագրերը/Վկայագրերը կնքվում են ՀՀ և օտարերկրյա քաղաքացիներ հանդիսացող Ապահովագրված անձանց օգտին՝ ՀՀ քաղաքացիների, ՀՀ տարածքում գտնվող օտարերկրյա քաղաքացիների:

**1.5.** Պայմանագրով/Վկայագրով Շահառու է հանդիսանում Ապահովագրված անձը, եթե Պայմանագրով Վկայագրով այլ բան նախատեսված չէ:

## 2. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԸ

**2.1.** Սույնով ապահովագրության օբյեկտ է հանդիսանում ՀՀ օրենսդրությանը չհակասող Ապահովադրի կամ Ապահովագրված անձի գույքային շահը՝ կապված ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում Ապահովագրված անձի առողջության հետ կապված բժշկական և/կամ այլ ծառայությունների ստացման ծախսերի հետ:

## 3. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐԸ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ

**3.1.** Ապահովագրական ռիսկն առաջանալու որոշակի հավանականությամբ և պատահականությամբ ապահովագրական պատահար տեղի ունենալու հետևանքով առաջացող վնասի հնարավոր մեծությունն է:

**3.2.** Ապահովագրական պատահար է հանդիսանում Ապահովագրված անձի՝ Պայմանագրի/Վկայագրի պայմանների համաձայն և դրա գործողության ժամանակահատվածում Բժշկական հաստատություն և/կամ Պայմանագրով/Վկայագրով նախատեսված կամ Ապահովագրողի հետ համաձայնեցված այլ հաստատություն դիմելը՝ առողջական վիճակի վատթարացման, վնասվածքի, թունավորման, առողջության պահպանման և բժշկական օգնության ցուցաբերման կարիք ունեցող այլ իրավիճակների կապակցությամբ բժշկական և/կամ այլ ծառայություններ ստանալու նպատակով: Նշված ծառայությունները տրամադրվում են Ապահովագրված անձին Պայմանագրով/Վկայագրով նախատեսված Ծրագրի համաձայն, որը հավելվածի տեսքով կցվում է Պայմանագրին/Վկայագրին և հանդիսանում է Պայմանագրի/Վկայագրի անբաժանելի մասը:

**3.3.** Եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով/Վկայագրով, ապահովագրական պատահար չի ճանաչվում Ապահովագրված անձի առողջության հետ կապված բժշկական և/կամ այլ ծառայություն ստանալու համար դիմելը՝

**3.3.1.** կապված սուր իրավիճակների և վնասվածքների հետ, որոնք առաջացել են կամ ստացվել են ալկոհոլի, թմրադեղերի կամ տոքսիկ, հոգեներգործուն դեղերի և/կամ նյութերի ազդեցության հետևանքով,

**3.3.2.** կապված վնասվածք ստանալու կամ այլ պաթոլոգիական վիճակի հետ, որն առաջացել է Ապահովագրված անձի կողմից հակաիրավական գործողություններ կատարելու արդյունքում, ինչը պետք է հաստատված լինի համապատասխան իրավասու մարմինների որոշմամբ՝ կապված Ապահովագրված անձի՝ սեփական առողջությանը դիտավորյալ վնաս պատճառելու, ինքնասպանության փորձերի և Ապահովագրված անձի այլ դիտավորյալ գործողությունների հետ՝ ուղղված ապահովագրական պատահարի առաջացմանը, բացառությամբ այն դեպքերի, երբ Ապահովագրված անձը հասցվել է այդ վիճակին այլ անձանց հակաիրավական գործողությունների հետևանքով, ինչը ևս պետք է հաստատված լինի համապատասխան մարմինների որոշումներով,

**3.3.3.** կապված վնասվածք ստանալու կամ այլ պաթոլոգիական վիճակի հետ, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն պատճառվել է այլ անձի կողմից ձեռնարկված գործողության արդյունքում, ով գործել է դե յուրե կամ դե ֆակտո իշխանության բռնազավթման գործողություններ կատարող կամ դրան նպաստող ահաբեկչություն կամ բռնություն նախաձեռնած կազմակերպության անունից կամ դրա հետ միասին,

**3.3.4.** կապված հատուկ վտանգավոր վարակների (վարակիչ հիվանդությունների) (բնական ծաղիկ, ժանտախտ, սիբիրյան խոց, խոլերա, բծավոր տիֆ, վիրուսային հեմոռագիկ տենդեր՝ Էբոլա, Լասսա, Մարբուրգ և այլն) առաջացման, տարածման, ՀՀ և ԱՀ իրավասու մարմինների կողմից հայտարարված համաճարակների, Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից հայտարարված համավարակների, ինչպես նաև այն տարածքներից ներմուծված վարակների հետ, որոնց սահմաններում հայտնաբերվել և ճանաչվել/հայտարարվել են համաճարակների օջախներ,

**3.3.5.** առաջացած պատերազմական գործողությունների, ինչպես նաև զորաշարժերի և այլ զինվորական միջոցառումների, դիվերսիայի, քաղաքացիական պատերազմի, ահաբեկչական գործողությունների,

- дееспособные физические лица - граждане РА и иностранные граждане.

**1.4.** В соответствии с настоящими Правилами Договоры/Полисы заключаются в пользу Застрахованных лиц - граждан РА, иностранных граждан, находящихся на территории РА.

**1.5.** По Договору/Полису страхования Выгодоприобретателем является Застрахованное лицо, если иное не предусмотрено Договором/Полисом.

## 2. ОБЪЕКТЫ СТРАХОВАНИЯ

**2.1.** Объектом настоящего страхования является имущественный интерес Страхователя или Застрахованного лица, который не противоречит законодательству РА, связанный с затратами на получение медицинских и/или иных услуг при возникновении страхового случая.

## 3. СТРАХОВЫЕ СЛУЧАИ И СТРАХОВЫЕ РИСКИ

**3.1.** Страховой риск - возможная величина убытка в результате возникновения страхового случая, имеющего признаки вероятности и случайности.

**3.2.** Страховым случаем является обращение Застрахованного лица в медицинское учреждение и/или иное учреждение, предусмотренное Договором/Полисом или согласованное со Страховщиком, за медицинскими и/или иными услугами в связи с ухудшением состояния здоровья, травмой, отравлением и иными состояниями, требующих оказания медицинской помощи, в соответствии с условиями Договора/Полиса и в период его действия. Услуги предоставляются Застрахованному лицу в соответствии с Программой страхования, предусмотренной Договором/Полисом страхования, которая в виде приложения прикрепляется к Договору/Полису и является неотъемлемой частью Договора/Полиса

**3.3.** Если иное не предусмотрено Договором/Полисом страхования, обращение Застрахованного лица за получением медицинских и/или иных услуг не признается страховым случаем:

**3.3.1.** в связи с острыми состояниями и травмами, возникшими или полученными в результате алкогольного, наркотического или токсического опьянения, из-за применения психотропных и/или других препаратов

**3.3.2.** в связи с получением травматического повреждения или возникновением иного патологического состояния, наступившего в результате совершения Застрахованным лицом противоправных действий. Данный случай должен быть подтвержден решением соответствующих уполномоченных органов, в связи с намеренным причинением Застрахованным лицом вреда своему здоровью, суицидальными попытками и иными умышленными действиями, направленными на наступление страхового случая. Исключаются случаи, когда Застрахованное лицо было доведено до такого состояния в результате противоправных действий иных лиц, что также должно быть подтверждено решениями соответствующих органов.

**3.3.3.** в связи с получением травмы или иным патологическим состоянием, которое прямо или косвенно было причинено вследствие предпринятых иным лицом действий, которое де-юре или де-факто действовало от имени или совместно организацией, совершающей действия по захвату власти либо организующей террористические действия или насилие, способствующие этому,

**3.3.4.** в связи с возникновением, распространением особо опасных инфекций (инфекционных заболеваний) (натуральая оспа, чума, сибирская язва, холера, сыпной тиф, вирусная геморрагическая лихорадка-Эбола, Ласса, Марбург и др.), эпидемиями, объявленными компетентными органами РА и АР, эпидемиями, объявленными Всемирной организацией здравоохранения, а также инфекциями, завезенными из территорий, в пределах которых были выявлены и

ցանկացած տեսակի ժողովրդական հուզումների կամ գործադուլների, բնական աղետների, բնական կամ տեխնիկական բնույթի արտակարգ իրավիճակների, էկոլոգիական աղետների հետևանքով:

**3.4.** Եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ, ապահովագրման ենթակա չեն այն անձինք, ովքեր Պայմանագրի/Վկայագրի կնքման պահին՝

**3.4.1.** 65 (վաթսունհինգ) տարեկանից բարձր են,

**3.4.2.** հանդիսանում են առաջին կամ երկրորդ խմբերի հաշմանդամներ,

**3.4.3.** հիվանդ են ՁԻԱՀ-ով կամ հանդիսանում են ՄԻԱՎ վարակակիրներ,

**3.4.4.** հաշվառված են նարկոլոգիական, նյարդահոգեբանական, թոքախտային, ուռուցքաբանական, մաշկավեներական (վեներական հիվանդությունների պատճառով) դիսպանսերներում, ՁԻԱՀ և ՄԻԱՎ-ի բուժման և պրոֆիլակտիկայի կենտրոններում,

**3.4.5.** գտնվում են ստացիոնար հսկողության տակ,

**3.4.6.** հետախուզման մեջ գտնվող կամ ազատազրկման դատապարտված անձինք:

**3.5.** Եթե Պայմանագրով/Վկայագրով ապահովագրվել է 3.4. կետի 3.4.3. և/կամ 3.4.4. և/կամ 3.4.6. ենթակետերում նշված կատեգորիաներից ցանկացածի տակ ընկնող անձ, ապա Պայմանագիրը/Վկայագիրը տվյալ Ապահովագրված անձի գծով համարվում է լուծված, իսկ ապահովագրությունը գործողության մեջ չմտած կնքման օրվանից և ապահովագրավճարի վերադարձ չի կատարվում:

## 4. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ

**4.1.** Ապահովագրական գումարն Ապահովագրողի կողմից վճարման ենթակա հնարավոր ապահովագրական հատուցման առավելագույն չափն է:

**4.2.** Ապահովագրական գումարը սահմանվում է Ապահովադրի և Ապահովագրողի համաձայնությամբ՝ ելնելով Պայմանագրով/Վկայագրով նախատեսված բժշկական ծառայությունների ցանկից և արժեքից:

**4.3.** Ապահովագրական գումարը տվյալ օբյեկտի գծով ապահովագրական հատուցման վճարումից հետո նվազում է կատարված հատուցման գումարի չափով, եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ կամ Ապահովադիրն ապահովագրական հատուցում ստանալուց հետո չի վերականգնել այն:

## 5. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ/ՎԿԱՅԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

5.1. Պայմանագիրը/Վկայագիրը կնքվում է մինչև մեկ տարի ժամկետով, եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ: Պայմանագրի/Վկայագրի գործողության ժամկետի սկիզբը և ավարտը նշվում են Պայմանագրում/Վկայագրում:

5.2. Պայմանագիրը/Վկայագիրն ուժի մեջ է մտնում դրա կնքման պահից, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով/Վկայագրով:

5.3. Պայմանագրի/Վկայագրի գործողությունն ավարտվում է Պայմանագրում/Վկայագրում որպես ապահովագրության գործողության ավարտի ամսաթիվ նշված ամսաթվի ժամը 23:59-ին, եթե Պայմանագրով/Վկայագրով կամ այլ հանգամանքներով, որոնց տեղի ունենալու դեպքում նախատեսված է ապահովագրության ժամկետի ավարտի ամսաթվից շուտ Պայմանագրի/Վկայագրի դադարեցում, այլ բան նախատեսված չէ:

## 6. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍԱԿԱԳՆԻ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐԻ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ԿԱՐԳԸ

6.1. Ապահովագրավճարը Պայմանագրով/Վկայագրով սահմանված չափով և պայմաններով Ապահովադրի կողմից Ապահովագրողին հնարավոր ապահովագրական հատուցման դիմաց վճարվելիք գումարն է, որն Ապահովադիրը պարտավոր է վճարել Ապահովագրողին՝ Պայմանագրով/Վկայագրով սահմանված կարգով և ժամկետներում: Ապահովագրավճարի հերթական մասը հանդիսանում է ապահովագրավճարի մաս՝ դրա տարաժամկետ վճարման դեպքում:

6.2. Ապահովագրական սակագինը սահմանված ապահովագրական գումարի նկատմամբ կիրառվող ապահովագրավճարի դրույքաչափն է:

6.3. Ապահովագրողն, ապահովագրավճարի չափը որոշելիս, կիրառում է իր կողմից հաստատված ապահովագրական սակագները՝ հաշվի առնելով ապահովագրության օբյեկտը և ապահովագրական

признаны/объявлены очаги эпидемий,

**3.3.5.** вследствие военных действий, а также маневров и иных военных мероприятий, диверсии, гражданских войн, террористических актов, народных волнений любого типа или забастовок, стихийных бедствий, чрезвычайных ситуаций природного или техногенного характера, экологических бедствий.

**3.4.** Если иное не предусмотрено Договором/Полисом страхования, страхованию не подлежат лица, которые на момент заключения Договора/Полиса:

**3.4.1.** старше 65 (шестьдесят пять) лет,

**3.4.2.** являются инвалидами первой или второй группы,

**3.4.3.** больны СПИДом или являются носителями ВИЧ,

**3.4.4.** состоят на учете в наркологических, психоневрологических, туберкулезных, онкологических, кожно-венерологических (по поводу венерических заболеваний) диспансерах, центрах по профилактике и лечению СПИДа и ВИЧ-инфекции,

**3.4.5.** находятся на стационарном лечении,

**3.4.6.** лица, находящиеся под уголовным розыском или лица, приговоренные к лешению свабоды,

**3.5.** Если по Договору/Полису были застрахованы лица, соответствующие категориям, указанным в любых из подпунктов 3.4.3. и/или 3.4.4. и/или 3.4.6. пункта 3.4,, Договор/Полис по части данного Застрахованного считается расторгнутым, а страхование – не вхожденным в силу с момента заключения и возврат страховой премии не осуществляется.

## 4. ПОРЯДОК ОПРЕДЕЛЕНИЯ СТРАХОВОЙ СУММЫ

**4.1.** Страховой суммой является максимальный объем выплаты, подлежащий возмещению, со стороны Страховщика.

**4.2.** Страховая сумма определяется по соглашению между Страхователем и Страховщиком, исходя из перечня и стоимости медицинских услуг, предусмотренных Договором/Полисом страхования.

**4.3.** После выплаты страхового возмещения страховая сумма уменьшается в размере суммы произведенной страховой выплаты, если Договором/Полисом не предусмотрено иное или Страхователь не восстановил ее после получения страховой выплаты.

## 5. ПЕРИОД ДЕЙСТВИЯ ДОГОВОРА/ПОЛИСА СТРАХОВАНИЯ

**5.1.** Договор/Полис заключается сроком до одого года, если иное не предусмотрено Договором/Полисом. Даты начала и окончания срока действия Договора/Полиса указываются в Договоре/Полисе.

**5.2.** Договор/Полис входит в силу с момента его заключения, если иное не предусмотрено Договором/Полисом.

**5.3.** Действие Договора/Полиса заканчивается в 23:59 часов даты, указанной в Договоре/Полисе как дата окончания, если иное не предусмотрено Договором/Полисом или иными обстоятельствами, в случае возникнавения которых предусмотревается прекращение Договора/Полиса до даты окончания срока страхования.

## 6. ПОРЯДОК ОПРЕДЕЛЕНИЯ СТРАХОВОГО ТАРИФА, СТРАХОВОЙ ПРЕМИИ, ОЧЕРЕДНОГО СТРАХОВОГО ВЗНОСА

**6.1.** Страховая премия – сумма, подлежащая оплате Страховщику со стороны Страхователя за возможное страховое возмещение в

ռիսկի բնույթը:

**6.4.** Պայմանագիր/Վկայագիր կնքելիս Ապահովագրողը հիմնական ապահովագրական սակագների նկատմամբ իրավունք ունի կիրառելու ճշգրտող գործակիցներ՝ հաշվի առնելով բժշկական և/կամ այլ ծառայությունների ցանկը և որակը, Բժշկական հաստատությունները, սպասարկող ընկերությունները և այլ հաստատությունները, ծածկույթի գործողության գոտիները, գտնվելու տարածքներն, Ապահովագրված անձանց գործունեության բնույթը, նրանց սեռը, տարիքը, ինչպես նաև Ապահովադրի (Ապահովագրված անձի) կողմից հարցաթերթիկում նշված տեղեկությունները, նախնական բժշկական զննության արդյունքներն, ապահովագրավճարի վճարման կարգը և պարբերականությունը և Պայմանագրով/Վկայագրով նախատեսված այլ պայմաններ:

**6.5.** Ապահովագրողը կարող է առաջարկել Ապահովադրին (Ապահովագրված անձին) լրացնել հարցաթերթիկ կամ անցնել նախնական բժշկական զննություն Պայմանագիրը/Վկայագիրը կնքելիս՝ ապահովագրավճարի (ապահովագրավճարի հերթական մասի) վճարման ենթակա չափի որոշման նպատակով, և/կամ Պայմանագրի գործողության ընթացքում: Նախնական բժշկական զննությունն անցկացվում է Ապահովագրողի հաշվին, եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ: Նախնական բժշկական զննությունն անցկացվում է համապատասխան լիցենզիա ունեցող Բժշկական հաստատությունում՝ Ապահովագրողի ընտրությամբ:

**6.6.** Եթե Ապահովագրված անձը հրաժարվում է Ապահովագրողի պահանջով լրացնել հարցաթերթիկ և/կամ անցնել նախնական բժշկական զննություն, Ապահովագրողն իրավունք ունի մերժել տվյալ Ապահովագրված անձի կողմից ներկայացված ապահովագրության պայմանագրի կնքման ցանկացած հայտ և/կամ Պայմանագրի/Վկայագրի կնքման պահից մինչև նախնական բժշկական զննությունն ընկած ժամանակահատվածում տվյալ Ապահովագրված անձի գծով ներկայացված ապահովագրական հատուցման ցանկացած հայտ քանի դեռ տվյալ Ապահովագրված անձը չի կատարել նշված պահանջը:

**6.7.** Պայմանագրով/Վկայագրով Ապահովադիրը կարող է վճարել ապահովագրավճարը միանվագ (մեկ վճարմամբ Պայմանագրի/Վկայագրի ամբողջ ժամկետի համար) կամ տարաժամկետ (ապահովագրավճարի հերթական մասի վճարման տեսքով): Ապահովագրավճարն (ապահովագրավճարի հերթական մասը) Ապահովադիրը վճարում է կանխիկ դրամով Ապահովագրողի դրամարկղ, Ապահովագրողի իրավասու ներկայացուցչին կամ անկանխիկ՝ Ապահովագրողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Ապահովագրավճարի վճարման օր է համարվում Ապահովագրողի կամ նրա լիազորված ներկայացուցչի դրամարկղ այն վճարելու օրը կամ Ապահովագրողի կամ նրա լիազորված ներկայացուցչի հաշվարկային հաշվին դրամական միջոցների ստացման օրը, եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ:

**6.8.** Պայմանագրով/Վկայագրով ապահովագրավճարի տարաժամկետ վճարում նախատեսված լինելու դեպքում, ելնելով ֆինանսական շուկայի փոփոխություններից՝ Ապահովագրողն իրավունք ունի իրականացնել ապահովագրավճարի վերահաշվարկ՝ հիմք ընդունելով ստորև բերված բանաձևը և ներկայացնելով լրացուցիչ հաշիվ վերահաշվարկված ապահովագրավճարի և բազային ապահովագրավճարի տարբերության չափով.

ՎԱՎ = ԲԱՎ / ՏՕՓ x ՎՕՓ

ՎԱՎ-ն՝ վերահաշվարկված ապահովագրավճար,

ԲԱՎ-ն՝ Պայմանագրում/Վկայագրում/Պայմանագրին/Վկայագրին կից լրացման մեջ նշված բազային/լրացուցիչ ապահովագրավճար,

ՏՕՓ-ն՝ Պայմանագրի/Վկայագրի/Պայմանագրին/Վկայագրին կից լրացման տրամադրման օրվա դրությամբ սահմանված ԱՄՆ դոլարի փոխարժեք,

ՎՕՓ-ն՝ ապահովագրավճարի հերթական մասի վճարման օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից ԱՄՆ դոլարի անկանխիկ վաճառքի համար հրապարակված փոխարժեք:

**6.9.** Եթե Պայմանագրի/Վկայագրի գործողության ընթացքում ՀՀ օրենսդրության մեջ փոփոխությունների արդյունքում տեղի ունենա բժշկական ծառայությունների և/կամ դեղորայքի գնագոյացման վրա ազդող հարկատեսակների ավելացում, Ապահովագրողը, ելնելով Պայմանագրի/Վկայագրի վնասաբերության մակարդակից, իրավունք ունի վերանայել Պայմանագրի/Վկայագրի գծով յուրաքանչյուր Ապահովագրված անձի գծով ապահովագրավճարը՝ հարկատեսակի ավելացման չափով:

**6.10.** Պայմանագրով/Վկայագրով սահմանված ժամկետում և չափով Ապահովադրի կողմից ապահովագրավճարը

рамках установленного Договором/Полисом объема и условиий, которую Страхователь должен оплатить Страховщику согласно порядку и срокам, установленным Догором/Полисом. Очередной страховой взнос – часть страховой премии при ее уплате в рассрочку.

**6.2.** Страховой тариф - ставка страховой премии, применяемая к установленной страховой сумме.

**6.3.** Страховщик при определении объема страховой премии, применяет утвержденные им страховые тарифы, с учётом объекта страхования и характера страхового риска.

**6.4.** При заключении Договора/Полиса, Страховщик имеет право применять поправочные коэффициенты к базовым страховым тарифам с учетом перечня и качества медицинских и/или иных услуг, медицинских учреждений, сервисных компаний и иных учреждений, зон действия покрытия, территорий нахождения, характера деятельности Застрахованных лиц, их пола, возраста, а также информации, указанной Застрахованным лицом (Страхователем) в анкете, результатов предварительного медицинского осмотра, порядка и частоты оплаты страховой премии и иных условий, предусмотренных Договором/Полисом.

**6.5.** С целью определения объема страховой премии (очередного страхового взноса), подлежащей оплате, при заключении Договора/Полиса и/или в течение его действия Страховщик может предложить Страхователю (Застрахованному лицу) заполнить анкету или пройти предварительный медицинкий осмотр. Если иное не оговорено Сторонами, предварительный медицинский осмотр производится за счет Страховщика. Предварительный медицинский осмотр проводится в медицинском учреждении по выбору Страховщика, имеющем соответствующую лицензию.

**6.6.** В случае, если Застрахованное лицо отказивается заполнить анкету и/или пройти предварительный медицинский осмотр по требованию Страховщика, Страховщик вправе отказать в любом требовании, предъявленном данным Застрахованным лицом в связи с заключением страхового договора и/или в связи с выплатой страхового возмещения в период между датой заключения договора до прохождения предварительного медицинского осмотра, пока Застрахованное лицо не выполнит указанное требование.

**6.7.** Страховая премия по Договору/Полису страхования может быть оплачена Страхователем единовременно (разовым платежом за весь срок действия Договора/Полиса) или в рассрочку (в виде осуществления очередного взноса). Страховую премию (очередной взнос) Страхователь оплачивает налично в кассу Страховщика или его уполномоченного представителя или перечисляет на банковский счет Страховщика. Датой оплаты страховой премии считается день ее оплаты в кассу Страховщика или его уполномоченного представителя или день поступления средств на счет Страховщика или его уполномоченного представителя, если иное не предусмотрено Договором/Полисом.

**6.8.** Если Договором/Полисом предусмотрена уплата страховой премии в рассрочку, исходя из изменений финансового рынка, Страховщик вправе провести пересчет страховой премии, беря за основу приведенную ниже формулу и представив дополнительный счет в размере разницы между пересчитанной страховой премией и базовой страховой премией.

ПСП = БСП / КДВ x КДУ

ПСП – пересчитанная страховая премия,

БСП – базовая/дополнительная страховая премия, указанная в Договоре/Полисе/ в прилагаемом к Договору/Полису дополнении,

КДВ – курс доллара США, установленный в день вручения Договора/Полиса/ прилагаемого к Договору/Полису дополнения,

КДУ – курс безналичной продажи доллара США, установленный Центральным банком РА в день уплаты очередного страхового

(ապահովագրավճարի հերթական մասը) չվճարելու դեպքում Ապահովագրողը չի սահմանում լրացուցիչ ժամկետ ապահովագրավճարի վճարման համար, չի ծանուցում այդ մասին Ապահովադրին:

## 7. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ, ԴՐԱ ԿՆՔՄԱՆ, ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

**7.1.** Ապահովագրության Պայմանագիրը/Վկայագիրը կնքվում է գրավոր ձևով սույն Պայմանների հիման վրա, որոնք հանդիսանում են Պայմանագրի/Վկայագրի անբաժանելի մասը: Պայմանագրում/Վկայագրում կարող են նախատեսվել ՀՀ օրենսդրությանը չհակասող և սույն Պայմաններում չնշված այլ դրույթներ: Պայմանների և Պայմանագրի/Վկայագրի դրույթների միջև տարբերությունների առկայության դեպքում նախապատվությունը տրվում է Պայմանագրին/Վկայագրին, եթե այն չի հակասում ՀՀ գործող օրենսդրությանը:
**7.2.** Պայմանագրի/Վկայագրի կնքման համար Ապահովադիրը կարող է դիմել Ապահովագրողին վերջինիս կողմից սահմանված համապատասխան ձևի գրավոր դիմումի միջոցով, որտեղ զետեղվում են ապահովագրության Պայմանագրի/Վկայագրի կնքման համար անհրաժեշտ տվյալները, կամ այլ մատչելի ձևով հայտնել Պայմանագրի/Վկայագրի կնքման մտադրության մասին (բանավոր դիմում, ֆաքս, էլ.փոստ և այլն):
**7.3.** Եթե Պայմանագիրը/Վկայագիրը կնքելուց հետո պարզվի, որ Ապահովադիրը հայտնել է ակնհայտ սուտ տեղեկություններ այն հանգամանքների վերաբերյալ, որոնք ունեն էական նշանակություն ապահովագրական պատահար տեղի ունենալու հավանականության և վերջինիս տեղի ունենալու դեպքում հնարավոր վնասների չափը (ապահովագրական ռիսկ) որոշելու համար, ապա Ապահովագրողն իրավունք ունի պահանջելու անվավեր ճանաչել Պայմանագիրը/Վկայագիրը:
**7.4.** Սույն Պայմաններում ներառված դրույթները, որոնք ընդգրկված չեն Պայմանագրի/Վկայագրի տեքստում, պարտադիր են Ապահովադրի համար, եթե Պայմանագրում/Վկայագրում ուղղակիորեն նշված է սույն Պայմանների կիրառման մասին, ընդ որում՝ սույն Պայմանների մեկ օրինակ տրվում է Ապահովադրին, որի վերաբերյալ համապատասխան նշում է կատարվում Պայմանագրում/Վկայագրում:
**7.5.** Պայմանագիրը/Վկայագիրը կարող է ներառել տարբեր Ծրագրեր, որոնք հավելվածի տեսքով կցվում են Պայմանագրին/Վկայագրին: Պայմանագրով/Վկայագրով կոնկրետ Ծրագրի շրջանակներում բժշկական և/կամ այլ ծառայությունների ցանկը, ինչպես նաև ցանկացած Ծրագրերի համադրումը կարող են ունենալ ինքնատիպ անվանում:
**7.6.** Պայմանագրում/Վկայագրում կարող է սահմանվել պայմանական կամ ոչ պայմանական չհատուցվող գումար: Պայմանական չհատուցվող գումարի դեպքում Ապահովագրողն ազատվում է Ապահովագրված անձին բժշկական և/կամ այլ ծառայությունների տրամադրման հետ կապված ծախսերի հատուցումից, եթե դրանց չափը չի գերազանցում պայմանական չհատուցվող գումարը, իսկ եթե հատուցման ծախսերը գերազանցում են չհատուցվող գումարի մեծությունը, ապա Ապահովագրողը պարտավորվում է վճարել հատուցումն ամբողջությամբ՝առանց պայմանական չհատուցվող գումարի մեծությունը նվազեցնելու: Ոչ պայմանական չհատուցվող գումարի դեպքում Ապահովագրողի պարտականությունները որոշվում են ծախսերի չափով՝ հաշվանցելով չհատուցվող գումարը: Չհատուցվող գումարը որոշում են Կողմերը՝ ապահովագրական գումարի նկատմամբ տոկոսի տեսքով կամ կոնկրետ գումարով:
**7.7.** Պայմանագրի/Վկայագրի հետ միաժամանակ Ապահովադրին (Ապահովագրված անձին) կարող է հանձնվել ապահովագրական քարտ (պլաստիկ և/կամ այլ): Ապահովագրական քարտը համարվում է անվանական փաստաթուղթ և ներառում է հետևյալ տեղեկությունները՝ Պայմանագրի/Վկայագրի (ապահովագրական քարտի) սերիան և համարը, Պայմանագրի/Վկայագրի գործողության ժամկետի ավարտը, բժշկական և այլ հաստատությունների տեղեկատվական հեռախոսահամարներն, Ապահովադրի (Ապահովագրված անձի) անունը, ազգանունը, անձնագրի սերիան և համարը, Ապահովագրողի կոնտակտային հեռախոսահամարները և այլ տեղեկություններ:
**7.8.** Ապահովադրին (Ապահովագրված անձին) արգելվում է փոխանցել Պայմանագիրը/Վկայագիրն (ապահովագրական քարտն) այլ անձի վերջինիս կողմից Պայմանագրով/Վկայագրով ծառայություններ ստանալու նպատակով: Պայմանագրում/Վկայագրում որպես Ապահովագրված անձ չնշված

взноса.
**6.9.** Если в течение действия Договора/Полиса в результате изменений в законодательстве РА будут добавлены типы налогов, влияющих на ценообразование медицинских услуг и/или медикаментов, Страховщик, исходя из степени убыточности Договора/Полиса, имеет право пересмотреть страховую премию по каждому Застрахованному лицу по Договору/Полису в размере добавления типа налога.
**6.10.** В случае неуплаты Страхователем страховой премии (очередной части страхового взноса) в сроках и размере, установленных Договором/Полисом, Страховщик не устанавливает дополнительный срок для выплаты страховой премии, не уведомляет об этом Страхователя.

## 7. ПОРЯДОК ЗАКЛЮЧЕНИЯ, ПРЕКРАЩЕНИЯ ДОГОВОРА/ПОЛИСА СТРАХОВАНИЯ И ВНЕСЕНИЯ В НЕГО ИЗМЕНЕНИЙ

**7.1.** Договор/Полис страхования заключается в письменной форме на условиях настоящих Правил, которые являются дополнительной и неотъемлемой частью Договора/Полиса. Договором/Полисом страхования могут быть предусмотрены другие положения, не противоречащие законодательству РА и не указанные в настоящих Правилах. При расхождении между положениями настоящих Правил и положениями Договора/Полиса страхования, преимущество имеет Договор/Полис страхования, если эти положения не противоречат законодательству РА.
**7.2.** Для заключения Договора/Полиса страхования Страхователь может обратиться к Страховщику либо с письменным заявлением по форме, установленной Страховщиком, которое содержит данные, необходимые для заключения Договора/Полиса страхования, либо иным доступным способом заявить о намерении заключить Договор/Полис страхования (устное заявление, факс, эл. почта и т.д.).
**7.3.** Если после заключения Договора/Полиса страхования будет установлено, что Страхователь сообщил заведомо ложные сведения об обстоятельствах, имеющих существенное значение для определения вероятности наступления страхового случая и объема возможных убытков от его наступления (страхового риска), Страховщик вправе потребовать признание договора недействительным.

**7.4.** Положения, включенные в настоящие правила, которые не содержатся в тексте Договора/Полиса страхования, обязательны для Страхователя, если в Договоре/Полисе страхования прямым образом указанно применение настоящих Правил, при этом один экземпляр настоящих Правил выдается Страхователю, что удостоверяется соответственной записью в Договоре/Полисе страхования.
**7.5.** Договор/Полис страхования может содержать различные программы страхования, которые в виде Приложения прикрепляются к Договору/Полису. Перечень медицинских и/или иных услуг по Договору/Полису страхования в рамках конкретной программы страхования, а также любое сочетание программ страхования может иметь оригинальное название.
**7.6.** В Договоре/Полисе может быть установлена условная или безусловная франшиза. В случае условной франшизы Страховщик освобождается от возмещения Застрахованному лицу расходов на медицинские и/или иные услуги, если их размер не превышает размер франшизы, если же расходы превышают размер франшизы, то Страховщик обязуется выплатить возмещение полностью - без вычета размера условной невозмещаемой суммы. При безусловной франшизе обязательства Страховщика определяются объемом расходов за минусом суммы франшизы. Франшиза определяется обеими Сторонами в процентном отношении к страховой сумме или в абсолютной величине.

**7.7.** Одновременно с Договором/Полисом страхования Страхователю (Застрахованному лицу) может быть выдана страховая карта (пластиковая и/или инго типа). Страховая карта является именным документом и содержит следующую информацию: серию и номер Договора/Полиса (страховой карты), окончание срока действия Договора/Полиса страхования, справочные телефоны, имя, фамилию, серию и номер паспорта

անձանց մատուցված ծառայությունների ծախսերն Ապահովագրողի կողմից չեն հատուցվում:

**7.9.** Եթե Պայմանագրի/Վկայագրի կնքման պահին Ապահովադրի աշխատող հանդիսացող անձը չի ընդգրկվում Պայմանագրի/Վկայագրի ներքո ապահովագրվող անձանց ցուցակում, ապա Պայմանագրի գործողության ընթացքում այլևս չի կարող ապահովագրվել: Բացառություն են կազմում այն անձինք, ովքեր Պայմանագրի/Վկայագրի կնքման պահին հանդիսացել են ուսանակ, փորձնակ կամ գտնվել են փորձաշրջանում և Պայմանագրի/Վկայագրի գործողության ընթացքում դարձել են Ապահովադրի աշխատող:

**7.10.** Պայմանագրի/Վկայագրի գործողության վաղաժամկետ դադարեցման դեպքում ապահովագրական քարտերը վերադարձվում են Ապահովագրողին դադարեցման օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում:

**7.11.** Պայմանագիրը/Վկայագիրը վաղաժամկետ դադարում է, և Ապահովագրված անձը կորցնում է Պայմանագրի/Վկայագրի գծով ծառայություններ ստանալու իրավունքը՝

**7.11.1.** եթե Պայմանագրի/Վկայագրի ուժի մեջ մտնելուց հետո ապահովագրական պատահար տեղի ունենալու հնարավորությունը և ապահովագրական ռիսկի առկայությունը դադարել են ապահովագրական պատահարից տարբեր հանգամանքների բերումով, մասնավորապես՝ Ապահովագրված անձի մահվան դեպքում,

**7.11.2.** Ապահովագրողի կողմից Պայմանագրով/Վկայագրով սահմանված պարտականություններն ամբողջ ծավալով կատարելու դեպքում, մասնավորապես՝ Պայմանագրի/Վկայագրի գծով ապահովագրական գումարի ամբողջ չափով ապահովագրական հատուցում իրականացնելու դեպքում,

**7.11.3.** իրավաբանական անձ հանդիսացող Ապահովադրի սնանկ ճանաչվելու դեպքում՝ համապատասխան որոշման ուժի մեջ մտնելու պահից,

**7.11.4.** ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Ապահովագրողի լուծարման դեպքում,

**7.11.5.** ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում, այդ թվում՝ դատարանի որոշմամբ:

**7.12.** Պայմանագիրը/Վկայագիրը կարող է լուծվել հետևյալ դեպքերում.

**7.12.1.** կողմերի համաձայնությամբ,

**7.12.2.** Ապահովադրի նախաձեռնությամբ,

**7.12.3.** Ապահովադրի կողմից Պայմանագրի/Վկայագրի/Պայմանների դրույթների խախտման համար Ապահովագրողի նախաձեռնությամբ,

**7.12.4.** Ապահովագրողի կողմից Պայմանագրի/Վկայագրի/Պայմանների դրույթների խախտման համար Ապահովադրի նախաձեռնությամբ,

**7.12.5.** Պայմանագրով/Վկայագրով և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:

**7.13.** Պայմանագիրը/Վկայագիրը կարող է Ապահովագրողի կողմից վաղաժամկետ լուծվել Ապահովադրի կողմից Պայմանագրով/Վկայագրով և/կամ սույն Պայմաններով սահմանված կարգով և ժամկետներում ապահովագրավճարը կամ ապահովագրավճարի հերթական մասը չվճարելու դեպքում՝ ապահովագրության չվճարված ժամանակահատվածի (ժամկետի) սկզբի ամսաթվից:

**7.14.** Պայմանագիրը/Վկայագիրը լուծելու մտադրության մասին կողմերը պարտավոր են ծանուցել միմյանց ոչ պակաս, քան Պայմանագրի/Վկայագրի վաղաժամկետ լուծման ենթադրվող ամսաթվից 15 (տասնհինգ) օրացուցային օր առաջ, եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ:

**7.15.** Պայմանագիրը/Վկայագիրը կնքելու պահին կամ դրա գործողության ընթացքում Պայմանագրի/Վկայագրի դրույթները կարող են փոփոխվել (ուժը կորցրած ճանաչվել և/կամ լրացվել) կողմերի համաձայնությամբ՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով: Պայմանագրի/Վկայագրի ցանկացած փոփոխություն համարվում է կատարված, եթե այն ձևակերպված է գրավոր և ստորագրված է կողմերի կողմից:

**7.16.** Ֆիզիկական անձ Ապահովադիրն իրավունք ունի առանց որևէ պատճառաբանության միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը/Վկայագիրը դրա կնքմանը հաջորդող 7 (յոթ) աշխատանքային օրվա ընթացքում (այսուհետ՝ մտածելու ժամանակ):

**7.17.** Մտածելու ժամանակը չի կիրառվում հետևյալ դեպքերում.

**7.17.1.** Պայմանագրի/Վկայագրի գործողության ժամկետը և/կամ Պայմանագրով/Վկայագրով նախատեսված ապահովագրության գործողության ժամկետը չի գերազանցում 1 (մեկ) ամիսը,

**7.17.2.** Պայմանագրի/Վկայագրի կնքմանը հաջորդող 7 (յոթ) աշխատանքային օրվա ընթացքում ֆիզիկական անձ Ապահովադիրը դիմել է ապահովագրական հատուցում ստանալու պահանջով:

Страхователя (Застрхованного лица), контактные телефоны Страховщика и иную информацию.

**7.8.** Страхователю (Застрахованному лицу) запрещается передавать Договор/Полис страхования (страховую карту) другому лицу с целью получения им услуг по Договору/Полису. Страховщик не возмещает расходы на оказание услуг лицам, не указанным в Договоре/Полисе как Застрахованное лицо.

**7.9.** Если в момент заключения Договора/Полиса лицо, являющееся работником Страхователя, не будет включено в список лиц, страхующихся по Договору/Полису, то в течение действия Договора/Полиса, оно больше не может быть застраховано. Исключение составляют лица, которые на момент заключения Договора/Полиса были практикантами, стажерами или находились на испытательном сроке и в течение действия Договора/Полиса стали работниками Страхователя.

**7.10.** В случае досрочного прекращения действия Договора/Полиса страхования, страховые карты возвращаются Страховщику в течение 3-х рабочих дней со дня прекращения.

**7.11.** Договор/Полис страхования прекращается досрочно, и Застрахованное лицо теряет право на получение услуг по Договору/Полису:

**7.11.1.** если после вхождения в силу Договора/полиса возможность происхождения страхового случая и наличие страхового риска отпали по иным обстоятельствам, отличающимся от страхового случая, в особенности – смерть Застрахованного лица

**7.11.2.** при исполнении Страховщиком своих обязательств по Договору/Полису в полном объеме, в особенности в случае осуществления возмещения в полном размере Страхового покрытия по Договору/Полису.

**7.11.3.** при банкротстве Страхователя, являющегося юридическим лицом, с момента вступления в силу соответствующего решения;

**7.11.4.** при ликвидации Страховщика по порядку, установленному законодательством РА,

**7.11.5.** в других случаях предусмотренных законодательством РА, в том числе по решению суда.

**բ)** Կատարված լաբորատոր և/կամ գործիքային հետազոտությունների պատասխանները:
**9.7.2.2.** Ստացիոնար բուժման դեպքում.
**ա)** Էպիկրիզ (քաղվածք հիվանդության պատմությունից), որտեղ պետք է նշված լինի՝
- Ապահովագրված անձի անունը, ազգանունը,
- Ապահովագրված անձի դիմելու և դուրսգրման ամսաթիվը,
- կատարված լաբորատոր և/կամ գործիքային հետազոտությունները,
- վերջնական ախտորոշումը,
- նշանակված բուժումը (դեղերի ցանկը, ներառյալ՝ դեղերի չափաբաժինն, ընդունման օրերի քանակը):

Էպիկրիզը պետք է ստորագրված լինի բուժող բժշկի կողմից և կնքված լինի Բժշկական հաստատության կնիքով:
**բ)** Կատարված լաբորատոր և/կամ գործիքային հետազոտությունների պատասխանները:
**9.7.2.3.** Ֆինանսական փաստաթղթեր.
Ամբուլատոր-պոլիկլինիկական և ստացիոնար բուժման դեպքում.
- դեղերի գնման դեպքում՝ ՀԴՄ (Հսկիչ դրամարկղային մեքենաների) կտրոն և տրամադրված դեղորայքի անվանացանկ,
- ՀԴՄ կտրոն, տրամադրված ծառայությունների անվանացանկը պարունակող փաստաթուղթ, ԴՄՕԱ (Դրամարկղի մուտքի օրդերի անդորրագիր) կամ հաշիվ-ապրանքագիր և վճարման փաստը հաստատող փաստաթուղթ (վերջիններում պետք է նշված լինի մատուցված բժշկական ծառայության տեսակը, սակագինը, վճարված գումարի չափը, վճարման ամսաթիվը, հաստատված լինի Բժշկական հաստատության կնիքով):

**9.7.2.4.** Անձը հաստատող փաստաթղթեր.
- ծննդյան վկայականի կամ անձնագրի բնօրինակը, որը ներկայացվում է Ապահովագրված անձի օրինական ներկայացուցչի կողմից, եթե Ապահովագրված անձն անչափահաս է:

**9.7.3.** Դժբախտ պատահարի դեպքում Ապահովագրողն իրավունք ունի պահանջել Ոստիկանության կողմից տրամադրվող և պատահարի փաստը հավաստող համապատասխան փաստաթուղթ:
**9.7.4.** Ապահովագրողի կողմից պահանջվող այլ փաստաթղթեր:
**9.8.** Սույն Պայմանների 9.6. կետի համաձայն հատուցում իրականացնելու համար հիմք են հանդիսանում Ապահովագրված անձի գծով փաստացի կատարված ծախսերը, որոնք նշված են սույն Պայմանների համաձայն Ապահովագրողին ներկայացված փաստաթղթերում: Ընդ որում, Ապահովագրված անձի գծով Ապահովագրողին ներկայացված հայտային դիմումում ներկայացված պահանջի չափ նշված լինելու դեպքում հատուցումն իրականացվում էնշված գումարի սահմաններում:
**9.9.** Ապահովագրական հատուցումն Ապահովագրված անձից տարբեր անձի կողմից ստանալու դեպքում, ստացողը պետք է ներկայացնի իր անձնագիրը և լիազորագիր՝ ստորագրված Ապահովագրված անձի կողմից:
**9.10.** Ֆիզիկական անձ Ապահովադիրն իրավունք չունի պահանջել ապահովագրական հատուցում մտածելու ժամանակի ընթացքում տեղի ունեցած ապահովագրական պատահարի համար, եթե այդ մասին նա չի ծանուցել Ապահովագրողին և եթե այդ պատահարը տեղի ունենալուց հետո ֆիզիկական անձ Ապահովադիրը, մինչև մտածելու ժամանակի ավարտը, ծանուցել է Ապահովագրողին Պայմանագիրը/Վկայագիրը լուծելու մասին:
**9.11.** Ապահովագրողը ստուգում է Պայմանագրում/Վկայագրում Ապահովագրված անձին տրամադրվող ծառայությունների ծավալի համապատասխանությունը, ծառայությունների տրամադրման ժամկետները և Պայմանագրի/Վկայագրի այլ դրույթների կատարումն, ինչպես նաև սեփական նախաձեռնությամբ կամ Ապահովադրի (Ապահովագրված անձի) գրավոր դիմումի հիման վրա անցկացնում է տրամադրված ծառայությունների որակի փորձաքննություն:
**9.12.** Ապահովադրի/Ապահովագրված անձի կողմից բժշկական փաստաթղթերը, ինչպես նաև բժշկական ծախսերը հիմնավորող փաստաթղթերը պետք է ներկայացվեն Ապահովագրողին բժշկական հաստատություն հաճախելուց և բժշկական ծախսերը կատարելուց հետո առավելագույնը 45 (քառասունհինգ) օրացուցային օրվա ընթացքում: Նշված ժամկետի խախտման դեպքում Ապահովադիրը կամ Ապահովագրված անձն առաջին իսկ հնարավորության դեպքում պարտավոր է գրավոր հիմնավորել ուշացման պատճառը՝ կից ներկայացնելով ուշացումը հավաստող փաստաթղթեր:
**9.13.** Ապահովագրողի կողմից չեն հատուցվում այն ծախսերը, որոնք

- предварительный диагноз
- заключительный диагноз
- назначенное лечение (список медикаментов, включая дозу лекарств, количество дней приема)

Справка должна быть заполнена на бланке врача или Медицинского учреждения и должна быть подписана лечащим врачом.
б) Заключения проведенных лабораторных и/или инструментальных обследований.

**9.7.2.2.** В случае стационарной помощи:
а) Эпикриз (выписка из истории болезни), в котором должно быть указанно:
- имя, фамилия Застрахованного лица
- дата обращения и выписки Застрахованного лица
- проведенные лабораторные и/или инструментальные обследования
- заключительный диагноз
- назначенное лечение (список медикаментов, включая дозу лекарств, количество дней приема)

Эпикриз должен быть подписан лечащим врачом и закреплен печатью медицинского учреждения.
б) Заключения проведенных лабораторных и/или инструментальных обследований.
**9.7.2.3.** Финансовые документы
В случае амбулаторно-поликлинической и стационарной помощи:
- В случае приобретения лекарств - кассовый чек и список с наименованиями предоставленных лекарств
- Кассовый чек, домумент содержащий наименования услуг, кассовый ордер или счёт-фактура и документ подтверждающий факт осуществления оплаты (в которых должны быть указаны тип предоставленной медицинской услуги, цена, сумма оплаты, дата оплаты, и которые должны быть заверены печатью медицинского учреждения.

**9.7.2.4.** Документы, предоставляемые для получения страхового возмещения:
- Оригинал свидетельства о рождении или паспорта, которые предоставляются Страховщику законным представителем Застрахованного лица, если Застрахованное лицо является несовершенолетним.

**9.7.3.** При наступлении несчастного случая Страховщик вправе потребовать соответствующий документ, предоставляемый Полицией и подтверждающий факт наступления случая.
**9.7.4.** Другие документы потребованные Страховщиком.
**9.8.** В соответствии с пунктом 9.6. настоящих Правил для произведения страховой выплаты основанием являются расходы, фактически понесенные на лечение Застрахованного лица, которые указаны в документах, представленных Страховщику согласно настоящим Правилам. При этом, если в заявлении, представленном Страховщику по части Застрахованного лица, будет указан размер требуемой суммы, то страховая выплата производится в рамках указанной суммы.
**9.9.** В случае получения страхового возмещения другим лицом, нежели Застрахованным, получатель должен предъявить свой паспорт и доверенность подписанный Застрахованным лицом.
**9.10.** Страхователь, являющийся физическим лицом, не вправе требовать страхового возмещения по страховому случаю, произошедшему в течение времени на обдумывание, если он об этом не уведомил Страховщика и если после наступления этого случая Страхователь, являющийся физическим лицом, до завершения времени на обдумывание уведомил Страховщика о расторжении Договора/Полиса.
**9.11.** Страховщик проверяет соответствие оказываемых Застрахованному лицу услуг оговоренному в Договоре/Полисе страхования объему, сроки предоставления услуг и выполнение других положений Договора/Полиса страхования, а также проводит экспертизу качества оказанных услуг по своему усмотрению или по письменному заявлению Страхователя (Застрахованного лица).
**9.12.** Документы, обосновавшее страхавой случай и медицинские затраты, Страхователь/Застрахованное лицо должен предоставить Страховщику в течении 45 (сорок пять) календарных дней после посещения в медицинское учреждение и осуществления затрат. При нарушении указанного срока Страхователь или

Ապահովադիրը (Ապահովագրված անձը) կրել է Պայմանագրի/Վկայագրի գործողության ժամկետի ավարտից հետո կամ կապված են մինչև Պայմանագրի/Վկայագրի ուժի մեջ մտնելը տեղի ունեցած ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձությունների հետ: Ապահովագրողը հատուցում է Պայմանագրի/Վկայագրի գործողության ժամկետի ընթացքում տեղի ունեցած պատահարների հետ կապված Պայմանագրի/Վկայագրի գործողության ժամկետի ավարտից հետո իրականացված ծախսերը, որոնք կատարվել են մինչև Ապահովագրված անձի կյանքին վտանգի վերացման պահը, եթե ապահովագրության Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ:

**9.14.** Եթե Պայմանագրով/Վկայագրով սահմանվում է չհատուցվող գումար, Ապահովագրված անձին տրամադրված ծառայությունների արժեքի մասը՝ Պայմանագրով/Վկայագրով սահմանված չհատուցվող գումարի չափին հավասար գումարով, վճարվում է Ապահովադրի (Ապահովագրված անձի) կողմից անմիջականորեն այդ ծառայությունները տրամադրող հաստատությանը, կամ Ապահովագրողին՝ տեղի ունեցած իրադարձությունն ապահովագրական պատահար ճանաչելուց և վերջինիս կողմից տրամադրված ծառայությունները վճարելու մասին ծանուցում ստանալու օրվանից սկսած 30 (երեսուն) օրացուցային օրվա ընթացքում:

**9.15.** Եթե Պայմանագրով/Վկայագրով նախատեսված դեպքերում ապահովագրական ընկերության հետ համաձայնեցված բուժումը կամ խորհրդատվությունն իրականացվում է արտերկրից հրավիրված մասնագետի կողմից և վերջինիս մատուցած ծառայության արժեքը գերազանցում է ՀՀ-ում գործող մասնագետների կողմից նմանատիպ ծառայության մատուցման արժեքն, ապա հատուցումն իրականացվում է ՀՀ-ում գործող մասնագետների կողմից նմանատիպ ծառայության մատուցման միջին գներով: Եթե սահմանված չեն ՀՀ-ում գործող մասնագետների կողմից նմանատիպ ծառայության մատուցման գներ, ապա հատուցման ենթակա գումարը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով ՀՀ բուժհաստատություններում գործող միջինացված գները:

**9.16.** Եթե Պայմանագրով/Վկայագրով նախատեսված դեպքերում Ապահովագրողի հետ համաձայնեցված բուժումը և/կամ խորհրդատվությունն իրականացվում է Ապահովագրողի հետ համագործակցող բժշկական հաստատությունում՝ հրավիրված մասնագետի կողմից և վերջինիս մատուցած ծառայության արժեքը գերազանցում է Ապահովագրողի և տվյալ բժշկական հաստատության միջև կնքված պայմանագրին կից ներկայացված գնացուցակով տվյալ ծառայության համար սահմանված արժեքը, ապա ապահովագրական հատուցումն իրականացվում է վերոնշյալ գնացուցակի համաձայն:

**9.17.** Եթե Ապահովագրված անձի գծով առկա են Ապահովագրողի հետ կնքված միևնույն ապահովագրական ռիսկը ծածկող մեկից ավելի ապահովագրության պայմանագրեր, որոնց գործողության ժամկետներն ամբողջությամբ կամ մասամբ համընկնում են և այդ պայմանագրերով ապահովագրական պատահար տեղի ունենալու պարագայում նախատեսված է.

**9.17.1.** ամրագրված դրամական հատուցման վճարում, ապա ապահովագրական հատուցումն իրականացվում է Ապահովագրված անձի ընտրությամբ այդ պայմանագրերից մեկով: Ընդ որում՝ ապահովագրական հատուցումն իրականացվում է եթե անգամ այլ ընկերություններում Ապահովագրված անձի գծով առկա են միևնույն ապահովագրական ռիսկը ծածկող ապահովագրության պայմանագրեր:

**9.17.2.** բժշկական ծախսերի հատուցում, ապա ապահովագրական հատուցումն իրականացվում է Ապահովագրված անձի ընտրությամբ այդ պայմանագրերից մեկով: Ընդ որում՝ եթե Ապահովագրված անձի գծով առկա են միևնույն ապահովագրական ռիսկը ծածկող և բժշկական ծախսերի հատուցման վճարում նախատեսող ապահովագրության պայմանագրեր այլ ապահովագրական ընկերություններում, ապա ապահովագրական հատուցումն իրականացվում է Պայմանագրի գծով ապահովագրական գումարի և Ապահովագրված անձի գծով կնքված բոլոր պայմանագրերով նախատեսված ընդհանուր ապահովագրական գումարի հարաբերությանը համամասնորեն:

**9.18.** Եթե Ապահովագրված անձի գծով առկա են Ապահովագրողի հետ կնքված միևնույն ապահովագրական ռիսկը ծածկող և ամրագրված դրամական հատուցման վճարում նախատեսող մեկ և ավելի ապահովագրության պայմանագրեր, ինչպես նաև բժշկական ծախսերի հատուցում նախատեսող մեկ և ավելի ապահովագրության պայմանագրեր և դրանց գործողության ժամկետներն ամբողջությամբ կամ մասամբ համընկնում են, ապա ապահովագրական հատուցումն իրականացվում է Ապահովագրված անձի ընտրությամբ մեկ ամրագրված դրամական հատուցման վճարում նախատեսող

Застрахованное лицо, при первой возможности, должен письменно обосновать причину задержки, представляя документы, подтверждающие задержку.

**9.13.** Страховщиком не оплачиваются расходы, понесенные Страхователем (Застрахованным лицом) в связи с событиями, имеющими признаки страхового случая, которые произошли после окончания срока действия Договора/Полиса страхования, или до вступления в силу Договора/Полиса страхования. Страховщик возмещает расходы, связанные со страховым случаем, наступившим в течение срока действия Договора/Полиса страхования, и понесенные после окончания срока действия Договора/Полиса, если эти расходы были сделаны до момента устранения угрозы жизни Застрахованного лица, если иное не предусмотрено Договором/Полисом страхования.

**9.14.** При установлении в Договор/Полисе страхования франшизы, часть стоимости оказанных Застрахованному лицу услуг в сумме, равной размеру установленной франшизы, оплачивается Страхователем (Застрахованным лицом) при получении (оказании) услуг непосредственно учреждению, которое оказывает эти услуги, либо Страховщику в течении 30 (тридцати) калнедарных дней после признания произошедшего события страховым случаем и получения уведомления об оплате последним оказанных услуг.

**9.15.** Если в случае предусмотренном Договором/Полисом лечение или консультация согласованное со Страховщиком осуществляется врачом, приглашенным из зарубежа и цена услуги предоставленной им превышает цену подобной услуги, которая предоставляется специалистом, практикующим в РА, страховое возмещение производится в размере средней цены подобной услуги, которая предоставляется специалистами, практикующими в РА.

Если цены на предоставление подобной услуги со стороны специалистов, практикующих в РА не установлены, сумма, подлежащая выплате, рассчитывается на основе усредненных цен медицинских учреждений, действующих в РА.

**9.16.** Если в случаях, предусмотренных Договором/Полисом, согласованное со Страховщиком лечение и/или консультация осуществляется в медицинском учреждении, сотрудничающем со Страховщиком, стоимость оказанной приглашенным специалистом услуги превышает указанную стоимость за данную услугу в прейскуранте, приложенном к договору, заключенному между Страховщиком и данным медицинским учреждением, то страховое возмещение осуществляется согласно вышеуказанному прейскуранту.

**9.17.** Если Страхователь заключил со Страховщиком более одного Договора страхования, которые покрывают одинаковый страховой риск и сроки которых полностью или частично совпадают, то при наступлении страхового случая по данным договорам предусмотрена:

**9.17.1.** выплата фиксированной денежной компенсации, в данном случае страховая выплата производится по одному из этих договоров по выбору Застрахованного лица. При этом страховая выплата производится, даже если в других компаниях по части Застрахованного лица имеются договоры страхования, покрывающие одинаковый страховой риск.

**9.17.2.** компенсация медицинских расходов, в данном случае страховая выплата производится по одному из договоров по выбору Застрахованного лица. При этом, если в отношении Застрахованного лица имеются договоры страхования в других страховых компаниях, покрывающие один и тот же страховой риск и предусматривающие компенсацию медицинских расходов, то страховая выплата производится пропорционально отношению страховой суммы по Договору/Полису к общей страховой сумме по всем указанным договорам по Застрахованному лицу.

**9.18.** Если в отношении Застрахованного лица имеются один и более одного договора страхования, покрывающие одинаковый страховой риск и предусматривающие фиксированную денежную компенсацию, а также один и более одного договора страхования, предусматривающие возмещение медицинских расходов, и сроки их действия полностью или частично совпадают, то страховая выплата производится по выбору Застрахованного лица по одному договору, предусматривающему фиксированное денежное возмещение, и по одному договору, предусматривающему возмещение медицинских

պայմանագրով և մեկ բժշկական ծախսերի հատուցում նախատեսող պայմանագրով: Ընդ որում՝ ամրագրված դրամական հատուցման վճարում նախատեսող պայմանագրով ապահովագրական հատուցումն իրականացվում է եթե անգամ այլ ընկերություններում առկա են միևնույն ապահովագրական ռիսկը ծածկող ապահովագրության պայմանագրեր: Իսկ եթե Ապահովագրված անձի գծով առկա են միևնույն ապահովագրական ռիսկը ծածկող և բժշկական ծախսերի հատուցման վճարում նախատեսող ապահովագրության պայմանագրեր այլ ապահովագրական ընկերություններում, ապա ապահովագրական հատուցումն իրականացվում է Պայմանագրի գծով ապահովագրական գումարի և Ապահովագրված անձի գծով կնքված բոլոր պայմանագրերով նախատեսված ընդհանուր ապահովագրական գումարի հարաբերությանը համամասնորեն:

**9.19.** Եթե Ապահովագրված անձը հանդիսանում է ՀՀ կառավարության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության ու սպասարկման որևէ ծրագրի շահառու և ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում ՀՀ կառավարության պետական բյուջեով նախատեսված հատկացումներով առողջապահական պետական նպատակային ծրագրերի շրջանակներում ստանում է բժշկական օգնության և սպասարկման երաշխավորված ֆինանսավորում ամբողջ ծավալով, ապա Ապահովագրողը չի իրականացնում հատուցում, իսկ սույն կետում նշված ծրագրերի շրջանակներում մասնակի ֆինանսավորում ստանալու պարագայում Ապահովագրողը Ապահովագրված անձին հատուցումն իրականացնում է տվյալ ապահովագրական պատահարի գծով չփոխհատուցված բժշկական ծախսերի տարբերության չափով:

## 10. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԵՐԺՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

**10.1.** Ապահովագրողն ազատվում է Ապահովադրին (Ապահովագրված անձին) ապահովագրական հատուցում իրականացնելու պարտավորությունից, եթե.

**10.1.1.** Ապահովագրված անձին տրամադրված բժշկական և/կամ այլ ծառայությունները նախատեսված չեն Պայմանագրով/Վկայագրով,

**10.1.2.** մատուցվել են չլիցենզավորված բժշկական և/կամ այլ հաստատությունների կողմից, եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ,

**10.1.3.** Ապահովագրված անձին տրամադրված բժշկական և/կամ այլ ծառայություններն իրենց բնույթով հանդիսանում են փորձարարական,

**10.1.4.** Ապահովադիրն/Ապահովագրված անձը չի կատարել 9.12. կետի պահանջը,

**10.1.5.** Ապահովադրի/Ապահովագրված անձի/Շահառուի կողմից ներկայացվել է Պայմանագրով/Վկայագրով ապահովագրական հատուցում ստանալու նպատակով խարդախության հատկանիշներ ունեցող հայտ և/կամ ապահովագրական հատուցման չափը ուռճացվել է և/կամ դեպքը որպես ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձություն ներկայացնելու նպատակով կատարվել է կեղծ հայտարարություն:

**10.2.** Ապահովագրողն իրավունք ունի մերժել ապահովագրական հատուցման վճարումը, եթե՝

**10.2.1.** Ապահովադիրն/Ապահովագրված անձը/Շահառուն չի կատարել Պայմաններով և/կամ Պայմանագրով/Վկայագրով նախատեսված իր այլ պարտականությունները,

**10.2.2.** կատարված բուժումը (այդ թվում՝ դեղորայքային), բուժական միջոցները, հետազոտությունները ՀՀ, միջազգային բժշկական ասոցիացիաների արձանագրություններով ճանաչված չեն որպես անհրաժեշտ տվյալ հիվանդության, վնասվածքի, առողջական վիճակի համար:

**10.3.** Բոլոր դեպքերում Ապահովագրողը չի հատուցում բժշկական և/կամ այլ ծառայությունների դիմաց, որոնք տրամադրվել են Ապահովագրված անձի ցանկությամբ, բժշկի կամ այլ մասնագետի կողմից վերջիններիս իրավասության շրջանակներում տրված ցուցումներին հակառակ:

## 11. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

**11.1.** Ապահովադիրը (Ապահովագրված անձը) պատասխանատվություն է կրում Ապահովագրված անձի (Ապահովադրի) կողմից բժշկի, շտապ և անհետաձգելի բժշկական օգնության, ոչ բժշկական ցուցումներով սանիտարատրանսպորտային միջոցների չհիմնավորված կանչի համար, բուժման ռեժիմի խախտման, առանց նախնական ծանուցման Բժշկական կամ այլ հաստատությունների հետ նախապես համաձայնեցված բուժական պրոցեդուրաներին, բժշկի ընդունելություններին և այլ

расходов. При этом страховая выплата по договору, предусматривающему фиксированную денежную компенсацию, производится даже если в других компаниях имеются договоры страхования, покрывающие один и тот же страховой риск. А если в отношении Застрахованного лица в других страховых компаниях имеются договоры страхования, покрывающие одинаковый страховой риск и предусматривающие оплату медицинских расходов, то страховая выплата производится пропорционально отношению страховой суммы по Договору/Полису к общей страховой сумме по всем указанным договорам по Застрахованному лицу.

**9.19.** Если застрахованное лицо является бенефициаром какой-либо программы медицинской помощи и обслуживания на бесплатных и льготных условиях, гарантированных правительством РА, и в случае наступления страхового случая получает гарантированное финансирование медицинской помощи и обслуживания в полном объеме в рамках государственных целевых программ здравоохранения с ассигнованиями, предусмотренными государственным бюджетом правительства РА, то страховщик не осуществляет возмещение, а в случае получения частичного финансирования в рамках указанных в настоящем пункте программ Страховщик осуществляет возмещение застрахованному лицу в размере разницы невозмещенных медицинских расходов по данному страховому случаю

## 10. ОСНОВАНИЯ ОТКАЗА В ВЫПЛАТЕ ВОЗМЕЩЕНИЯ

**10.1.** Страховщик освобождается от обязательства осуществления страховой выплаты Страхователю (Застрахованному лицу) если:

**10.1.1.** Медицинские и/или другие услуги, предоставленные Застрахованному лицу, не предусмотрены Договором/Полисом,

**10.1.2.** Были получены в нелицензированном медицинском и/или ином учреждении, если иное не предусмотрено Договором/Полисом страхования;

**10.1.3.** Медицинские и/или другие услуги являются экспериментальными или исследовательскими по своей природе.

**10.1.4.** Страхователь/Застрахованное лицо не осуществил требование пункта 9.12.

**10.1.5.** Если Страхователем/Застрахованным лицом/Выгодоприобретателем представлено обманное заявление на получение страховой выплаты по Договору/Полису и/или размер страховой выплаты умышленно преувеличен и/или для представления случая в качестве события, имеющего признаки страхового случая, было сделано ложное объявление.

**10.2.** Страховщик имеет право отказать в осуществлении страховой выплаты, если

**10.2.1.** Страхователь/Застрахованное лицо/Выгодоприобретатель не выполнил иные свои обязанности, предусмотренные Правилами и/или Договором/Полисом.

**10.2.2.** проведенное лечение (в том числе медикаментозное), лечебные средства, обследования не признаны необходимыми при данном заболевании, травме, состоянии здоровья протоколами РА и международных медицинских ассоциаций.

**10.3.** Во всех случаях Страховщик не оплачивает медицинские и/или иные услуги, которые были оказаны по желанию Застрахованного лица, вопреки рекомендациям врача или иного специалиста в рамках их компетенции.

## 11. ОТВЕТСТВЕННОСТЬ СТОРОН

**11.1.** Страхователь/Застрахованное лицо несет ответственность за необоснованный вызов Застрахованным лицом (Страхователем) врача, скорой и неотложной медицинской помощи, санитарных транспортных средств не по медицинским показаниям, за нарушение лечебного режима, неявку без предварительного уведомления на заранее согласованные с медицинским или иным учреждением процедуры, приемы врачей и другие услуги. Застрахованное лицо (Страхователь) обязан возместить

ծառայություններին չներկայանալու դեպքերում: Ապահովագրված անձը (Ապահովադիրը) պարտավոր է փոխհատուցել Ապահովագրողին սույն կետում սահմանված իրադարձությունների հետ կապված վնասներն, այդ թվում՝ նաև սույն կետում սահմանված իրադարձությունների գծով բժշկական կամ այլ հաստատությունների կողմից նախատեսված տուժանքը:

**11.2.** Ապահովագրողը պատասխանատվություն չի կրում որևէ վթարի, սպասարկման ընդհատման կամ անկանոն տրամադրման համար, որոնք կապված են այնպիսի սարքավորման, էլեկտրաէներգիայի մատակարարման համակարգերի և/կամ կապի ուղիների կամ ցանցերի հետ, որոնք ապահովվում, տրամադրվում, շահագործվում և/կամ սպասարկվում են երրորդ անձանց կողմից:

**11.3.** Կողմերից ոչ մեկը պատասխանատվություն չի կրում Պայմանագրից/Վկայագրից բխող պարտականություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար, եթե դա հանդիսացել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանք, մասնավորապես՝ ջրհեղեղի, հրդեհի, երկրաշարժի և այլ տարերային աղետների, ռազմական գործողությունների, քաղաքացիական պատերազմի, ցանկացած տիպի ժողովրդական հուզումների, գործադուլների, տնտեսական շրջափակման, ինչպես նաև այլ կառավարության կողմից սահմանված սահմանափակումների և արգելքների, որոնք ծագել են Պայմանագիրը/Վկայագիրը կնքելուց հետո և որոնք կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել:

**11.4.** Այն դեպքում, երբ 11.3. կետում նշված հանգամանքներից մեկն անմիջականորեն ազդել է պարտականությունը Պայմանագրով/Վկայագրով սահմանված ժամկետում կատարելու վրա, դրա կատարումը հետաձգվում է այդ հանգամանքների ազդեցության ժամկետով: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 30 (երեսուն) օրացուցային օրից ավելի, կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի ամբողջությամբ կամ մասնակիորեն լուծել Պայմանագիրը/Վկայագիրն՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին, և այդ դեպքում կողմերից ոչ մեկը պատասխանատվություն չի կրում հնարավոր վնասների փոխհատուցման համար:

**11.5.** Անհաղթահարելի ուժի ազդեցությունը Պայմանագրից/Վկայագրից բխող պարտականությունների կատարման վրա պարտավոր է ապացուցել այն կողմը, որի պարտականությունների կատարմանը խոչընդոտում է նման ազդեցությունը:

## 12. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

**12.1.** Պայմանների համաձայն կնքված Պայմանագրից/Վկայագրից բխող վեճերը կարգավորվում են բանակցությունների միջոցով:

**12.2.** Բանակցությունների արդյունքում համաձայնության չգալու դեպքում վեճերը լուծվում են Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից՝ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի համաձայն կամ դատական կարգով՝ ՀՀ օրենսդրության համաձայն:

**12.3.** Վիճելի հարցեր լուծելու դեպքում Պայմանագրի/Վկայագրի դրույթները գերակայող ուժ ունեն սույն Պայմանների և Ծրագրի նկատմամբ:

**12.4.** Վիճելի հարցեր լուծելու դեպքում Ծրագրի դրույթները գերակայող ուժ ունեն սույն Պայմանների նկատմամբ:

**12.5.** Վիճելի հարցեր լուծելու դեպքում, եթե սույն Պայմաններով Ծրագրի դրույթների վերաբերյալ նախատեսված է առավել մանրամասն նկարագրություն, ապա կիրառվում են սույն Պայմանների և Ծրագրի դրույթները միաժամանակ:

## 13. ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՏԵՐՄԻՆՆԵՐԸ

**Պայմանագիր/Վկայագիր՝** Ապահովադրի և Ապահովագրողի միջև կնքված գրավոր պայմանագիր/վկայագիր, որով Ապահովագրողը պարտավորվում է Պայմանագրի/Վկայագրի գործողության ընթացքում ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում վճարել Ապահովագրված անձին՝ սահմանված ապահովագրական գումարի շրջանակներում բժշկական, բժշկատրանսպորտային ծառայությունների, ինչպես նաև Պայմանագրով/Վկայագրով նախատեսված այլ ծառայությունների մատուցման ծախսերը, իսկ Ապահովադիրը պարտավորվում է վճարել ապահովագրավճարը (ապահովագրավճարի հերթական մասը) Պայմանագրով/Վկայագրով սահմանված ժամկետներում և համապատասխան չափով:

**Ապահովագրական հատուցում՝** Ապահովագրողի կողմից Պայմանագրի/Վկայագրի և Ծրագրի համաձայն Ապահովագրված անձին տրամադրված բժշկական և այլ նմանատիպ ծառայությունների դիմաց վճարում:

**Ծրագիր՝** Պայմանագրի/Վկայագրի շրջանակներում

Страховщику связанные с этим расходы, в том числе на оплату соответствующих штрафных санкций за невыполнение или не надлежащие выполнение обязательств медицинскому или иному учреждению.

**11.2.** Страховщик не несет ответственность за любую аварию, сбой или беспорядочное предоставление обслуживания, которые связаны с оборудованием, системой снабжения электроэнергией и/или путями или сетями связи, которые обеспечиваются, предоставляются, эксплуатируются и/или обслуживаются третьими лицами.

**11.3.** Ни одна из сторон не несет ответственности за полное или частичное неисполнение обязательств, предусмотренных Договором/Полисом, если убыток был нанесен в результате воздействия непреодолимой силы, в частности, наводнения, пожара, землетрясения и иных стихийных бедствий, военных действий, гражданских войн, народных волнений любого типа, забастовок, экономической блокады, а также в результате ограничений и запретов, установленных другим правительством, которые возникли после заключения Договора/Полиса и которые стороны не могли предусмотреть или предотвратить.

**11.4.** В случае, если одно из обстоятельств указанных в пункте 11.3. имеет непосредственное воздействие на исполнение обязательств в сроках установленных по Договору/Полису страхования, их исполнение откладывается на срок действия этих обстоятельств. Если действие непреодолимой силы длиться более 30 (тридцать) календарных дней, каждая из сторон имеет право полностью или частично расторгнуть Договор/Полис, заранее известив об этом другую Сторону, и в этом случае ни одна из сторон не несет ответственности за возмещение возможных убытков.

**11.5.** Действие непреодолимой силы на исполнение обязательств по Договору/Полису страхования должна доказать та сторона, исполнению обязательств которой препятствует подобное действие.

## 12. ОРЯДОК РАЗРЕШЕНИЯ СПОРОВ

**12.1.** Согласно Условиям, споры возникающие по заключенному Договору/Полису, разрешаются путем переговоров.

**12.2.** При недостижении согласия в результате переговоров, споры решаются Омбудсменом финансовой системы, согласно закону РА об Омбудсмене финансовой системы или судебным порядком, согласно законодательству РА.

**12.3.** При рассмотрении спорных вопросов положения Договора/Полиса имеют приоритетную силу перед Правилами и Программой.

**12.4.** При рассмотрении спорных вопросов положения Программы имеют приоритетную силу перед настоящими Правилами.

**12.5.** При рассмотрении спорных вопросов, если настоящими Правилами относительно положений Программы предусмотрено более подробное описание, то положения настоящих Правил и Программы применяются одновременно.

## 13. ТЕРМИНЫ, ИСПОЛЬЗУЕМЫЕ В ПРАВИЛАХ.

**Договор/Полис** – письменный договор/полис, заключенный между Страхователем и Страховщиком, которым Страховщик обязуется при наступлении страхового случая в период действия Договора/Полиса оплатить Застрахованному лицу расходы, в пределах установленной страховой суммы, на получение медицинских, медико-транспортных услуг, а также иных услуг, предусмотренных Договором/Полисом, а Страхователь обязуется оплатить страховую премию (очередной страховой взнос) в установленные Договором/Полисом сроки и в соответствующем объеме.

**Страховое возмещение** - оплата медицинских и иных подобных услуг, оказанных Застрахованному лицу в соответствии с условиями Договора/Полиса страхования и Программой страхования.

**Программа** - в рамках Договора/Полиса перечень медицинских услуг, подлежащих возмещению, которые установленны в

Պայմանագրին/Վկայագրին կից ներկայացվող հավելվածով սահմանված հատուցման ենթակա բժշկական ծառայությունների ցանկ,

**Բժշկական հաստատություն՝** համապատասխան լիցենզիա ունեցող բուժպրոֆիլակտիկ հաստատություն, գիտահետազոտական և բժշկական ինստիտուտներ, այդ թվում՝ վերականգնողական և սանիտարապրոֆիլակտիկ հաստատություններ, ինչպես նաև ֆիզիկական անձինք, որոնք լիցենզիայի հիման վրա իրականացնում են բժշկական գործունեություն:

**Դեղատներ՝** կազմակերպություններ, որոնք իրականացնում են դեղորայքային միջոցների մանրածախ առևտուր, դեղամիջոցների պատրաստում, որոնք ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան ունեն դեղագործական գործունեության իրականացման լիցենզիա և որոնք Ապահովագրված անձանց տրամադրում են ՀՀ-ում գրանցված դեղամիջոցներ:

**Բժշկական ծառայություններ՝** միջոցառումներ կամ միջոցառումների համալիր ուղղված հիվանդությունների կանխարգելմանը և բուժմանը, որոնք ունեն առանձին ավարտուն նշանակություն և որոշակի արժեք:

**Բժշկատրանսպորտային ծառայություններ՝** Ապահովագրված անձին փոխադրելու հետ կապված ծառայություններ՝

- շտապ օգնության մեքենայով կամ այլ տեսակի տրանսպորտով ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձության տեղի ունենալու վայրից մինչև ՀՀ տարածքում մոտակա Բժշկական հաստատություն փոխադրելը,
- Ապահովագրված անձի առողջական վիճակին համապատասխան տրանսպորտային միջոցով (անհրաժեշտության դեպքում՝ բժշկական անձնակազմի ուղեկցությամբ), բժշկական պատճառներով (բժշկի նշանակումով) ՀՀ տարածքում գտնվող այլ Բժշկական հաստատություն փոխադրելը,
- Ապահովագրված անձի առողջական վիճակին համապատասխան տրանսպորտային միջոցով (անհրաժեշտության դեպքում՝ բժշկական անձնակազմի ուղեկցությամբ), ՀՀ տարածքում Ապահովագրված անձի մշտական բնակության վայրին ամենամոտ Բժշկական հաստատություն փոխադրելը:

**Հայտային դիմում՝** ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձություն տեղի ունենալու դեպքում ապահովագրական հատուցում/Ապահովագրված անձի գծով փոխհատուցում ստանալու համար Ապահովագրողին ներկայացվող դիմում, մասնավորապես՝

- Ապահովագրողին առձեռն ներկայացվող դիմում, կամ
- Ապահովագրողի պաշտոնական էլեկտրոնային հասցեից օգտվելով առցանց գրանցված հայտ և/կամ Պայմանագրում/Վկայագրում նշված էլեկտրոնային հասցեին ուղարկված գրություն, կամ
- Ապահովագրված անձի՝ Պայմանագրի/Վկայագրի համաձայն Բժշկական/այլ հաստատություն դիմելուց հետո համապատասխան հաստատության կողմից Ապահովագրողին ուղարկված փաստաթուղթ/էլեկտրոնային նամակ, որի գծով առկա է Ապահովագրողի՝ հայտային դիմումի ստացումը հաստատող պատասխան նամակ:

Приложение к Договору/Полису страхования.

**Медицинское учреждение** – лечебно-профилактическое учреждение, научно-исследовательские и медицинские институты, имеющие соответствующую лицензию, в том числе реабилитационные и санаторно-профилактические учреждения, а также физические лица, осуществляющие медицинскую деятельность на основании лицензии.

**Аптеки –** организации, осуществляющие розничную торговлю лекарственными средствами, изготовление лекарственных средств, имеющие лицензию на осуществление фармацевтической деятельности в соответствии с требованиями законодательства РА, и предоставляющие Застрахованным лицам лекарственные средства, зарегистрированные в Республике Армения.

**Медицинские услуги -** мероприятия или комплекс мероприятий, направленные на профилактику и лечение заболеваний, имеющие отдельное завершенное значение и определенную стоимость.

**Медико-транспортные услуги** – услуги, связанные с транспортировкой Застрахованного лица:

- Транспортировка машиной скорой помощи или иным видом транспорта с места, имеющего признаки страхового случая, до ближайшего медицинского учреждения на территории РА;
- в соответствие с состоянием здоровья Застрахованного лица транспортировка транспортным средством (при необходимости, в сопровождении медицинского персонала), в другое медицинское учреждение на территории РА по медицинским причинам (по предписанию врача);
- в соответствие с состоянием здоровья Застрахованного лица транспортировка транспортным средством (при необходимости, в сопровождении медицинского персонала) до ближайшего к месту постоянного проживания Застрахованного лица медицинского учреждения на территории РА.

**Заявление на получение страховой выплаты** – заявление, представляемое Страховщику для получения страхового возмещения/компенсации расходов на лечение Застрахованного лица, в случае наступления события, имеющего признаки страхового случая, в частности:

- заявление, представляемое Страховщику лично, или
- заявление, поданное в режиме онлайн через официальный сайт Страховщика, и/или письмо, отправленное на адрес электронной почты, указанный в Договоре/Полисе, или
- документ/электронное письмо, отправленное Страховщику соответствующим учреждением после обращения согласно Договору/Полису Застрахованного лица в Медицинское/иное учреждение, по части которого имеется ответное письмо, подтверждающее получение заявления Страховщиком.